

ՄՈՉԽՈՒԲԵՐԻԶԵ, Ա.—«Ելգուջառ» Վրացերէնից թարգմանեց Տ. Փի  
բումեանց։ Հրատարակութիւն Թիֆլիսի Հայոց Հրատարակական  
Ընկերութեան Գինն է 45 կոպէզ։

Ան ժամանակից ի վեր, երբ կոլ-  
կասարնակ հակերն էլ սկսեցին հրա-  
տարակել զանազան լրագիրներ, ամ-  
սագիրներ և դրական հանդէսներ,  
խմբագրողներից և սրանց աշխատա-  
կիցներից ոչ մէկը մինչ վերջին ժա-  
մանակներս ուշադրութիւն չդարձ-  
րեց մի փոքրաթիւ ազգի գրականու-  
թեան վրա, թէև այն ազգը մուր դա-  
րսոր հարսանն է, որը ներկալումն  
ճշում է գովիմի հռանդով լուսաւո-  
րութիւն տարածել իր անդամների  
մէջ մարդենի համականալի լեզուվ։  
Այդ ազգը վրաց ազգն է, որը ինչ  
պէս հին դարերում, ունի և ներ-  
կալում ծագիող գրականութիւն  
արժանի լուրջ ուշադրութեան և հա-  
մակրանքի, Բայց բնչու չէինք հար-  
ցասիրում այս գրականութիւնը, ին-  
չու դէպէ նա մախոթակին ազ-  
գասիրական արժանաբանքով էինք  
վերաբերում մինչև ամժմ։ Երեխ այն  
պատճառով որ մեր եղբարդ վրացի-  
ները սմոշիշարա սոմնիխու (վախիստ  
հալ) էին անւանում մեզ ու մենք  
էլ, պարաքի տակը չմնալու համար,  
առուտուց վրացին կանչում նրանց  
Արտեղից կամ որ չար հոգին էր  
դցիլ այս փոխադարձ անարդ առե-  
լութիւնը դարենոր հարևան ազգերի  
մէջ, որոնք, միմեանց սիրելու և  
լարգելու փոխանակ, իրար միան են  
ուսում։ Սական ուրախալի է նկա-

տել մի երեսով, որ հակերն ու վրա-  
ցիները, լաւ հասկանալով անմիտ ա-  
տելութեան վեատակարութիւնը, մի-  
մանց հաշտութեան և բարեկամու-  
թեան ձեռք մեկնել են սկսել այս  
վերջին ժամանակներում, լարգանքով  
և ակնածութեամբ վերաբերելով ի-  
րար Օրինակի, տեսէք, լարգելի պ.  
Գ. Ծերեթելու խմբագրութեամբ հրա-  
տարակող «Կւալի» շաբաթաթերթը  
բացիլ է իր սիմեակները և ուրա-  
խութեամբ տպագրում, հակերին վե-  
րաբերեալ ինքնուրուն լողածներ,  
նկարագիրներ և մանրավէպերն  
Հակերէն «Ցարադ» շաբաթաթեր-  
թըն էլ է սկսել վրացերէնից թարգ-  
մանութիւններ զետեղիլ իր մէջ, Աա-  
կան պէտք է ձշմարիտը խոստվա-  
նել, որ այդ նոր և համակրելի շարժ-  
ման սկիզբը դրեց պ. Աւ. Արամիսա-  
նեանցը, իր «Մուրճ» ամուգրով, որը  
չէշտելով մեր դրացի ազգերի ուսում-  
նասիրութեան անհրաժեշտութեան  
վրայ, զորա սկիզբը դրեց, տալով հակ-  
ընթերցող հաստրակութեանը վրացի-  
րէնից երկու զեղեցիկ վէպերի թարգ-  
մանութիւնը. — Ակացիա Աղամիսանի.  
Ե. Ժամաւածէի և «Ելլիսօ» Ալ. Մոշ-  
խութարիձէի, որոնք լաւ ընդունե-  
լութիւն դասան և որոնց պէտք է հե-  
տեւ նորն Մոշխութարիձէի «Ելլիսօ-  
ջա» վէպը «Մուրճ»-ի խմբագրու-  
թեան քանից կրկնած խոստման

համաձանք՝ Յուսանք, որ բանը սրանով չի վերջանալ, այլ կը լարատեմ մեզանում նոր ծնունդ առած դրացիական համերաշխութեան գաղափարը:

«Մուրա»-ի տւած դրդումին հետեւց նաև թիֆլիսի հալոց հրատարակական ընկերութիւնը, որը մօտժամանակներում հրատարակեց վրացի նշանաւոր հեղինակի «Ելգուջա», զլուխ գործոց վէպը, թարգմանութեամբ պ. Փիրումանցի, Բալց նախ քան ան մասին խօսելը, թէ ո՞ր աստիճան լաջող է հակերէն թարգմանութիւնը, անհրաժեշտ ենք դատում բերել ալսուեղ վէպի կարճառօտ բովանդակութիւնը:

«Ելգուջավո» հեղինակը իր վէպի համար նիւթ է վերցրել Վրաստանի նորագոյն պատմութեան աճ ժամանակամիջոցը, երբ Վրաստանը զանազան պատճառներից ստիպւած՝ իր դուռը թիւնը լարատնելու համար ընդունում է ոռուսաց հզօր տէրութեան հովանաւորութիւնը: Ելգուջա, որ վէպի հերոսն է, Գագութիկնապահ ճորտերից մէկն էր և իր տիրոջ նոր դնած, Զերքէզստանից փախցրած գերունու վրա սիրահար-

մելով ու փոխադարձաբար սիրմելով, ինդրում է Գագուց, որ չերքէզունի Մզազօին իրեն տակ Սական Գագին ալսպիսի բազմաթիւ գերուհիներ ունենալուց վերին աստիճան լրացած և տակավին Մզուզօի տըրփանքները չվակելած, մերժում է ելգուջավին, լոնչ էր մնում լզգուջավին անել, եթէ ոչ լեռնականների ընդհանուր սովորութիւն համեմատ, փախցնել աղջկան. և փախցնում էլ է իր հաւատարիմ ընկերի օգնութեամբ: Բաց լզգուջան չէ կարողանում երկար ժամանակ վախել անդորր երջանկութիւն իր սրտի հատորի հետ, այլ նրան կոզակները սպանում են իր ընկեր Մաթիափի հետ, կառավարութեան հրամանով, և ապարախտ Մզազօն իր զաւակներով նորից նորս է դառնում:

Ահա ալսպէս է վերջացնում իր վէպը Մոշչուրարիձէն: Սական պ. Փիրումանցը վէպի թարգմանութիւնը աւարտում է անտեղի ուր Ելգուջան փախցնում է իր սիրահարին ու պսակում: Թարգմանիչը իր վարմուճքը ալսպէս է բացարում հէնց առաջին երեսում: «Թարգմանելով պ. Ա. Մոշչուրարիձէի (Ա. Ղազբէգի) ալս ամենանշանաւոր գրածքը, մենք հարկ համարեցինք դուրս ձգել սրա մի ամբողջ երրորդ մասը, որ ոչնչ կապ չունէր ընդհանուր հիւսածքի հետո, Վերոիշեալից ընթերցողը կարող է եղանակցնել, որ Մոշչուրարիձէի վէպի համբէն թարգմանութիւնը մի շատ պակաս պրատ բան է և ոչ մի նմանութիւն չունի բնագրի հետո, Բացի երրորդ գլուխ չթարգմանելը, պ. Փի-

<sup>1)</sup> Ալդ վէպը խոստացել էինք առաջ ներկաէ 1893 թւականին, բայց այժմ տպագրած տեսմենով Թիֆլիսի Հալոց Հրատ. Ծնկերութեան կողմէց, մենք համար դեռ ևս չենք մնանք նորա նոր հրատարակութեան խնդիրը, թէս արդէն վազօրօք վէպի թարգմանութիւնը լանձնւած էր մեր աշխատակից և այս օդւածի հեղինակ պ. Մ. Նաւասարդեանցին:

րումնանցը քմածին կերպով դուրս է զցում երկրորդ գլխից շատ տեղեր: Օրինակ բնագրի 81-երեսից հանել է 28 տող այն խօսակցութեանը, որը տեղի է ունենում Սւյամոնի և Ալեքսանդր արքալորդու պատգամաւորների մէջ, և 98-երրորդ երեսից դարձեալ 31 տող հանւած է և ալճ. մինչեւ ալս հանւած տողերը շատ բան են հասկացնում ընթերցողին այն ժամանակիւակ կացութեան մասին, իսկ պ. թարգմանիչը զրկում է մեղ ալս ամենից:

Մենք հաստատապէս համոզւած ենք, որ եթէ վէպի հեղինակ՝ Ա. Մոշինուբարիձէն տակաւին տիրապետելիս լինէր իր մտաւոր ուժերին ինչպէս իր գեղեցիկ վէպի հեղինակելու միջոցներում<sup>1)</sup>, շատ պիտի վրայովէր և զարանար իր դործի, բացի անշնորհ թարգմանութիւնից, ալս կերպ ալլանդապիելու պատճառով:

Կարդալով հէնց առաջին երեսում գրւած թարգմանչի ծանօթութիւնը, շատ զարմացանք, նամանաւանդ այն պատճառով՝ որ մենք էլ էինք կարդացել վէպի վրացերէն բնագիրը և թարգմանչի գտած հիւսւածքի հետ կապ չունենալու համար կրկին ծալրէ ի ծալր կարդացինք բնագիրը, բայց այնպիսի բան չգտանք: Ալդ մոքով մենք դիմենցինք նուն իսկ վրաց հրատա-

<sup>1)</sup> Պր. Ա. Մոշինուբարիձէն քանի մի տարի է, որ անդամալուծ և ոգեպէս հիւսանդ՝ գտնուում է Թիֆլիսի Միքայէլեան հիւսանդանոցում:

Ռ. Հեղ.

րակչական ընկերութեան վարիչ անդամներից մի քանիսին և խնդրեցինք ցոլց տալ մեղ վէպի այն մասերը, որոնք թարգմանչի ասութեամբ կապ չունեին ընդհանուր հիւսածքի հնաւ Բայց ի մուծ զարմանս մեր, արդու պարոնները, միաբերան բողոքելով թարգմանչի վարմունքի դէմ, աստարարուցին, որ պ. Փիրումնանցը բոլորովին չէ հասկացել հեղինակին, և ուղիղ որ չէ հասկացել և շատ տեղեր բոլորովին, ալսպէս ասած, թարա է թարգմանել, Որպէս զի «Մուրճի» ընթերցողը մեղ չմնղազրի զրաբարտութեան մէջ, բերենք մի քանի օրինակները — Հեղինակին ասում է 1 երեսում. «անտեղ սարը ծակած՝ ներքնուղի էր շնչւած, որի ծալրի մօտ մոխեցի պահնակներ էին կանգնած, որոնք պաշտպանում էին Վրաստանը անկոչ հիւսերից»: Իսկ թարգմանիչը ասում է. — «Աւդ ծակի մի կողմում կանգնած էին պահապաններ Վրաստանի մուտքը պահպանելու համար»: — Սրանից չի հասկացում թէ ովքը էին պահապանները և ում դէմ էին պաշտպանում:

Հեղինակին ասում է. «Աէ քո Խենցելավի զօրութիւնը խոռով կենակ ինձ, ծաղրելով պատասխանեց Մոխեցին»: Իսկ թարգմանիչը ասում է. — «Աէ սրբերդ խոռով կենամ գլխիդ, ծիծաղելով ասեց ձորեցին (էջ 5): Ակստեղ թարգմանիչը երկնչում է Մոխեցու փոխանակ, որ չէ ուղում օսի Խենցելան խոռով կենակ նրան և անէծքը թափում է նուն իսկ օսի գլխին: Հարկ չկալ կոմպլիմէնտ անելու Մոխեցուն, որը ծաղրում է» (և ոչ թէ:

ծիծաղում) օսի երկշռութիւնը և նրա սրբին,

Հեղինակն ասում է. «Այս խօսքերի վրա որանի պատկից թագստի վրալից մի հրացան վայր թեքմց ու ձախ լւսեց» թարգմանիչը ասում է. «Ազդ խօսքերի վրակ մի հրացան դուրս ցցւեց պատի բացւածքից ու ձախն եկաւ» (Էջ 7-րդ):

Հեղինակն ասում է. «Ուրեմն չեն շարշարիլ, չեն սպանիլ ինձ. և այս պիսի թեթև նախաղասութիւնը թարգմանել է. — «Հապա ինչ չու են ինձ շարքում. չեն սպանի արդեօք ինձ» (Էջ 15-րդ): Զերքէ-զուսուն սական ոչ ոք չեր շարշարում, հետեապէս չեղած բանի դէմ չեր կարող բողոքել:

Հեղինակն ասում է. — «Իսկ Եթէ ձանձրանաս, այն ժամանակ ինչ կ'անես», թարգմանել է. «Իսկ Եթէ զղջաս, այն ժամանակ Բնչ պէտք է անել» (Էջ 23). Զջլում են ոչ իսկական սիրով սիրողները, որպէս են լըգուջան և Մզազմն, այլ նրանք, որոնք փողի և դրութեան համար են ամուսնանում, որոնք ցովակիաց են և որոնց սիրան ու զգացմունքները լրացած են ընդհանուրին լայտնի շրջաններում:

Հեղինակն ասում է. — «Եւ սրանք հեշտութեամբ կարող էին պահապաններից անհկատելի կերպով փախչել և ընդմիշտ զերծ մնալ նրանցիցու թարգմանւած է. — «Ի՞նչ որ նրանք կարող էին զիշերով զուրս դալ, ընդդիմագրել զուրս դալ, ընդդիմագրել զիշերին միշտ ազատութել (Եր. 49): Մնչու լըգուջան կը զուրս դար ընկերների հետ արձակ տեղ և կընդ-

դիմադրէր պահապաններին, քանի որ աւելի ապահով տեղամբ էր ապատանած և առամել հնչու էր ծածկ. ած տեղից մարտնչել իրան հալածող բազմաթիւ թշնամիների դէմ. հետեապէս պէտք է փախչէր առանցնկատմւու, ինչպէս որ հնդինակն էլ գրում է:

Առաջ բերած կտորները, կարծում ենք, բաւականին պարզ ցուց է տալիս, որ թարգմանիչը աշխատել է, կարծես դիմամբ, բնագիրը բոլորովին թարս թարգմանել. Կարող էինք աւելի շատ, մինչն անգամ վերին ասածանի ծիծաղելի կերպով թարգմանած կտորներ բերել. բաց ապացան էլ բաւական պարզ ցուց է տալիս, որ թարգմանիչը չէ հասկացել հեղինակին, երեխի վրացերէն լեզուում գլխովին բորբիկ վնելու պատճառով Հատեապէս չեր էլ կարող միշտ թարգմանել, որովհետեւ, բացի վրացերէնը լաւ չգիտենալուց, չզիտէ նոյն իսկ ամենն օր հազար անգամ կրկնուղ ամենապարզ խօսքերի նշանակութիւնը:

Բերենք դարձեալ քանի մի օրինակներ.

Նշանակուած է Առքեմենել և Դացինւա—ծաղկել—ծիծաղել  
մոծզենա—ձանձրանալ—զղջալ  
փրուտունի—փոնչալ—ախորժակ  
մլլափ—թե, աջ—սպանող  
մորչենա—առողջացնել—կենդանացնել  
գաշինջւա—զննել, անդղել—տեսնել  
օխոնջորա—կատակ—փափակել  
մոքնեա—վրա բերել—թափ տալ,  
դանաշառութեա—մնապարտութիւն,  
թարգմանած է՝ անհնազանզութիւն  
զարդընիլի—լրբացած—փչացւած  
նաբադի—եափնջի—թաղիք

Դեռ սրանք ոչինչ պ. Փիրումանցը իր թարգմանութիւնը կատարելապէս թարս անելու համար, մինչև անգամ քանի մի չատուկ անուններ էլ է քմածնորէն թարգմանել. Օրինակ Մոխնցիների անաղւարավորութիւնը անունը թարգմանել է հեղեղ, բայց աւելի զարմանալին այն է, որ այն «հեղեղը» մի ալ տեղ «Աստծուկամք» և մի երրորդ տեղում էլ «Արդէորդ» է դուրս գալիս.

Խորհուրդ ենք տալիս վրացերէն

իմացող հակ ընթերցողներին կարդալ բնագիրը և կը տեսնեն թէ որքան զեղեցիկ ոճով է գրւած վէպը, որ աստիճան համակրելի են դուրս բերած տիպերը և ինչ չիանալի ու գեղարւեստական նկարագիրներ կան աւելացրական և բնութեան երեսլթների, որոնք, զժբաղտաբար, բոլորովին չեն նկատում հակ թարգմանութեան մէջ,

ԱԷՐՊԻԼ ՆԵՐԱՇՎՐԵԼՈՒՅ,